անմիջապէս սահմանակից է մեր Շիրակին (Ալէքսանդրապոլի կամ Լենինականի գաւառ)։

Զաւախք գաւառին սահմանակից են՝ հարաւից Ալէքսանդրապոլի գաւառը եւ մասամբ Զըլբրի շրջանը (Կարս), արեւմուտքից՝ Ախալցխայի գաւառը, հիւսիսից՝ Վրաստան (Գորիի գաւառ), արեւելքից՝ Ծալկա եւ Բորչալու (ներկայիս Վրաստանի մասեր)։ Զորս կողմից լեռներով եղերուած՝ Զաւախքը ներկայացնում է մի բարձր սարահարթ, 5–6 հազար ոտք եւ աւելի բարձրութեամբ։ Գաւառի ամենաբարձր սարն է Արուլ, լեռնաշղթի կեդրոնում, ունի երկու գագաթ։ Արեւելեան սահմանի վրայ բարձրանում են Սումսար լեռները, համանուն գագաթով (10,777 ոտք)։ Գաւառի կլիման շատ խիստ է. ձմեռը տեւում է երկար. ձիւն շատ է գալիս, սակայն օդը առողջարար է։ Կլիման համեմատաբար մեղմ է Թբիլիսի կոչուած հովտում, ուր Ախալքալաքի դեռակը թափւում է Կուրի մէջ։

Ախալքալաքի գիւղացիութիւնը վարում է խեղճ կեանք, որովհետեւ երկրի բարձր դիրքը եւ կլիմայական պայմանները աննպաստ են հասութաբեր տնտեսութեան համար։ Խաղողի, բամպակի եւ նման բոյսերի մշակութեան մասին Ախալքալաքցիները գաղափար չունին։ Մինչեւ իսկ հացաբոյսների մշակութիւնը առատ արդիւնք չէ տալիս։ Ցորենը դժուար է հասնում, որովհետեւ կարճատեւ է ամառը. աւելի շուտ հասնում է գարին։ Պտղատու ծառերի մշակութիւնը զարգացած է միայն Թբիլիսի հովտում, որ ցածրադիր լինելով եւ համեմատաբար մեղմ կլիմայ ունենալով նպաստաւոր է նման տնտեսութեան համար։ Գաւառը աւելի յարմար է անասնապահութիւն եւ յարակից տնտեսութիւններ զարգացնելու համար, քանի որ ունի ընտիր արօտավայրեր։ Այդ տնտեսութիւնն էին վարում նաեւ դուխոբորները։ Ապագայ կարող է ունենալ նաեւ մեղուաբուծութեանը։

Դժբախտութիւն է սակայն, որ, ինչպէս Հայաստանի շատ լեռնագաւառներում, այնպէս նաեւ Զաւախքում ժողովուրդը չարունակում է կառչած մնալ դեռ եւս հին, վաղ ամենութեան շրջանից իրեն ժառանգութիւն մնացած հիմնական զբաղումին — երկրագործութեան եւ յատկապէս հացաբոյսերի մշակութեան, որ սակայն ամենեւին հասութաբեր չէ։ Դրա հետ մէկտեղ, Ախալքալաքի գաւառին եւս յատուկ է խիստ սակաւահողութիւնը. շնչին հաշիւ կէս դեսեատին վարելահող է ընկնում։ Հակառակ այս ամէնի, կրկնում ենք, Ախալքալաքցին չարունակում է, այսօր էլ, ցորեն եւ գարի ցանելով զբաղուիլ, հացի բերքի վրայ դնել իր յոյսը, փոխանակ անասնապահութեան, կաթնատնտեսութեան եւ մեղուաբուծութեան անցնելու։ Անդին՝ Զաւախքի հարուստ արօտավայրերից օգտւում են հեռու կովկասեան լեռներից եկող վրացի խաշնարածները։

Այս, ինչպէս նաեւ միւս կողմից այն պարզան, որ Վրաստանը աւելի եղիպտացորենի երկիր է (Արեւմտեան Վրաստանը ամբողջապէս), քան ցորենի եւ գարու, որով եւ սրանց կարիքը ունի Վրաստան, վերջինիս վարիչները ոչ միայն իրենց կողմից զարկ չեն տուել ու չեն տալիս Ախալքալաքի բնական (բացիօնէլ) տնտեսութեան զարգացման, այլ, ընդհակառակը, խոչընդոտներս են հանել այդ ուղղութեամբ արուող քայլերին դէմ։ Պատճառ որ՝ Ախալքալաքցի հայի մշակած ցորենի եւ գարիի կարիքը ունին իրենք, վրացիները, ինչպէս նաեւ նոյն այդ Ախալքալաքի արօտավայրերի կարիքը՝ կովկասեան լեռնաշղթայի վրացի լեռնարնակ խաշնարածները։ Նոյն հիմնական քաղաքականութիւնն էր վարում առաջ Ախալքալաքի վերաբերմամբ նաեւ ցարական կառավարութիւնը։ Դրա համար էլ նա պոկեց Զաւախքը Ալէքսանդրապոլից, որի հետ առաջ կապուած էր վարչականօրէն։ Ու ցաւալի մի աւելորդ զէնք տուաւ վրացի աշխարհակալների ձեռքը՝ հայաբնակ Զաւախքը համարելու «Վրաստանի անբաժան մաս»։

Այժմ մի քանի խօսք Ախալքալաքի գաւառի ազգաբնակութեան վիճակագրութեան մասին։ Դժբախտաբար դեռ լոյս չեն տեսել (գոնէ մեր ձեռքը չեն հասել) համախորհրդային մարդահամարի (1926 թ. Դեկտեմբեր) տուեալները ըստ անդրկովկասեան գաւառների, որպէսզի կարող լինէինք տեղեկ, թէ Ախալքալաքի գաւառը այսօր ո՞րքան բնակիչ ունի, եւ թէ՝ դրա ո՞ր մասը հայերից է բաղ-